37 Իմ կյանքը տվեցի, արյունս հեղեցի,

1. Իմ կյանքը տվեցի, արյունս հեղեցի,
Որ քո մեղքը թողվի, իմ անձը զոհեցի,
Կյանքս տվեցի քեզ համար,
Իսկ դու՝ ի՞նչ Ինձ համար:

2. Լուսո երկնից եկա, Իմ փառաց աթոռից,
Ծառայի պես եղա, կրեցի նախատինք,
Այս ամենը լոկ քեզ համար,
Իսկ դու՝ ի՞նչ Ինձ համար:

3. Կրեցի փշե պսակ, ցավ, տառապանք և ահ,
Խմեցի դառը բաժակ՝ հնազանդ մինչև ի մահ,
Այս չարչարանքս էլ՝ քեզ համար,
Իսկ դու՝ ի՞նչ Ինձ համար:

4. Մեղքերիդ թողություն հիմա տալիս եմ քեզ,
Կյանք և երանություն, ձրի շնորհք առ քեզ,
Այս ամենը քեզ եմ տալիս,
Դու էլ սիրտդ տուր Ինձ: